№ 34 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 22 **1897** ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 22 № 34

ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՒ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Մարիամ Ախաշեան իր աղջիկներով և Ստեփան Լիսիցեանց, սրտի ցաւով յայտնելով առաջինը իր որդու, իսկ վերջինը իր աներ որդու՝

ԲԺԻՇԿ ԳԷՈՐԳ ԱԽԱՇԵԱՆԻ

մահը, որ տեղի է ունեցել Լոմժայում անցեալ սեպտեմբերի 25-ին, խնդրում են ազգականներին և ծանօթներին չնորհ բերել հանգուցեալի հոգեհանգիստին, կիրակի, մարտի 23-ին, Մաղնու ս. Գէորգ եկեղեցին, ժամը 11½-ին: Նոյնտեղ կատարվելու է և առաջնի վենայ ու վերջինի քենակալ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԻԻԼՆԱԶԱՐԵԱՆԻ
հոգեհանգիստը: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ո՞ւր մնաց միջազգային իրաւունքը. Հեռագիրներ.—ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Էլի նոր փաստեր. Նամակ Էջմիածնից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Բոլգարիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Գրողի օրագիրը.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նոր առաջնորդներ թափուր թեմերում (Նամակ Կ. Պոլսից).

ՈՒՐ ՄՆԱՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

—

Անգլիական ազատամիտների յարձակումներից պաշտպանվելու համար՝ մարքիզ Սոլսբիւրի նորերումս լորդերի պալատում խօսեց միջազգային իրաւունքի մասին: Այդ տեսակէտից ցունաստանը, Սոլսբիւրիի ասելով, որ և է հիմք չունի ձգտել կրետէի միացման. և եւրոպական պետութիւնները այժմ իրանց թնդանօթներով պահպանում են այդ միջազգային իրաւունքը:

Ողբան համոզիչ կը լինէին այդ խօսքերը, եթէ նրանց արտասանողը լինէր մի այնպիսի պետութեան ներկայացուցիչ, որ գործով ցոյց է տուել, թէ ինքը ճանաչում և յարգում է միջազգային իրաւունքը: Բայց երբ զողը խօսում է ազնուութեան մասին, հարստահարողը փաստաբանում է արդարութիւն, այն ժամանակ ո՞վ կարող է այլ ևս հաւատ ունենալ, ո՞վ կարող է ասել, թէ այդ քարոզիչները, առնուազն, կարող են և բարի օրինակ դառնալ:— Ի հարկէ ոչ ոք:

Անգլիական պահպանողականների պետը խօսում է միջազգային իրաւունքի մասին: Իսկ ի՞նչ է Անգլիան:—Միջազգային իրաւունքի խախտում: 1878 թուին Անգլիան նոյն Սոլսբիւրիի ղեկավարութեամբ, դաղանի կերպով խլեց Կիպրոսը,—կնքելով Թիւրքիայի հետ պաշտպանողական և յարձակողական դաշնակցութիւն: Եւ այդ տեղի ունեցաւ այն ժամանակ, երբ Բերլինում պետութիւնները պիտի քննէին Սան-Ստէֆանոյի դաշնագիրը: Կամենալով Թիւրքիայի խնամակալի դերը խաղալ, լորդ Բիկոնսֆիլդ կոնդրէսի մի նիստում դրպանից հանեց Կիպրոսի դաշնագիրը և դրեց ապշած դիպլոմատների առաջ. Ռուսաստանը հարկադրված եղաւ զիջումներ անել, և վերջ ի վերջոյ Անգլիան կարողացաւ Բերլինում հնարած իր դաշնագրով աւելի ևս խճճել արևելեան հարցը, դնելով նրա մէջ խառնակութիւնների, կիսատ յոյսերի, զոհերի և դահիճների իրաւունքի մի անվերջ քաոս:—Միջազգային իրաւունքի ո՞ր յօդուածի հիման վրա կատարվեց այս չարագործութիւնը, Կիպրոսի յափշտակութիւնը:

Ութսունական թուականների սկզբում Արաբի փաշան Եգիպտոսում ապստամբութիւն էր յարուցել: Անգլիան ռմբակոծեց Աղէքսանդրիան և ժամանակաւորապէս գրաւեց փարաւոնների երկիրը՝ այնտեղ կարգ ու կանոն հաստատելու համար: Բայց մինչև այժմ Անգլիան իր ճանկերից բաց չէ թողնում այդ չաղ պատառը, չը նայած որ ամենքն են պահանջում վերջ դնել ժամանակաւոր զրաւման: Խորամանկ Ալբիոնը, սակայն, չէ լսում այդ պահանջները, միաք չունի թողնել Նեղոսի հովիտը և այդպիսով պետութիւնների մէջ միշտ վառ է պահում փոխադարձ անվստահութեան, թշնամութեան կրակը:—Միջազգային իրաւունքն է միթէ թոյլ տալիս այսպիսի մի անարգարութիւն. այդ իրաւունքի ո՞ր կէտի վրա է Անգլիան հիմնել իր տիրապետութիւնը Եգիպտոսում:

Բերենք մի երրորդ օրինակ էլ, այս անգամ ոչ Անգլիայի գործերից: Բերլինի կոնդրէսը Աւստրօ-Ունգարիային իրաւունք տուեց ժամանակաւորապէս զրաւել Թիւրքական երկու նահանգ—Բոսնիա և Հերցեգովինա: Հաբսբուրգեան փոքր և հազար ու մի արհեստական կարկատաններով հաղիւ պահվող կայսրութիւնը կլանեց այդ երկու երկիրները: Միջազգային ո՞ր իրաւունքով: Քաղաքական մեծ չարագործ Մետտերնիխի այժմեան ժառանգները ասում են, թէ Բոսնիայում և Հերցեգովինայում իրանք պիտի մտցնեն կարգ և իրաւունք, քաղաքակրթութիւն: Բայց ահա լրագիրները հաղորդում են որ Բոսնիա-Հերցեգովինայում նորից ղուրս է բարձրացրել դաղտնի հայրենասիրական ընկերութիւնը, որ նպատակ է ընտրել ազատել սլաւոնական այդ երկու նահանգները Աւստրօ-Ունգարիայի բարբարոս տիրապետութիւնից...

Էլ ո՞ւր մնաց միջազգային իրաւունքը...

Իրաւունք—դա մարդկութեան նուիրական հասկացողութիւններից մէկն է: Եւ նա վաղուց հանգստութիւն տարածած կը լինէր աշխարհի վրա՝ եթէ ընդունվեր այն պարզ ճշմարտութիւնը, թէ իրաւունքը միայն ուժեղին չէ պատկանում: Անգլիան, Աւստրիան, Գերմանիան նուիրագործել են զայլի իրաւունքը. բայց, ի հարկէ, դա միջազգային իրաւունք չէ, այլ գիշատիչ հակումների մի պաշտամունք, որի անունից Սոլսբիւրիի և իր նմանները կարող են փքուն ճառեր արտասանել: Հարց է սակայն, ո՞ւմ պիտի համոզեն այդ ճառերը...

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
(Ռուսաց դործակալութեան)

—

Կ. Պոլիս, 20 մարտի: Թոքատի և Սիվասի անցքերի վերաբերութեամբ դեսպանների միացեալ առաջադրութեան առիթով ռուսաց և անգլիական դեսպանները առանձին յայտարարութիւն արեցին այն մտքով, թէ նրանք համարում են վալի Խալիլ փաշայի վարմունքը անկանոն, և նրա վրա պէտք է ծանրանայ ազատայ դէպքերի պատասխանատուութիւնը:

ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԷԼԻ ՓԱՍՏԵՐ

—

«С. Петербургскія Вѣдомости» լրագիրը մարտի 15-ի համարում հրատարակել է մի առաջնորդող յօդուած՝ «Къ армянскому вопросу въ Закавказьи» վերնագրով, որ դեռ վերջացած չէ: Յօդուածի նպատակն է ապացուցանել, թէ հրքան անհիմն և պետական տեսակէտից անողջամտակայարմար ու անարդար են այն հալածանքները, որոնց ենթարկվում են վերջերս հայերը ռուս հասարակութեան և մամուլի մի մասի կողմից: Հայերին մեղադրում են սեպարատիստական ձգտումների մէջ. հայերին մեղադրում են գիշատիչ հակումների մէջ. հայերին մեղադրում են, որ նրանք տնտեսապէս ճնշում, հարստահարում են Կովկասի միւս ազգութիւնները և նրանց ձեռքումն է կենտրոնացած երկրի գործարանական և արդիւնաբերական արտադրութիւնը. վերջապէս հայերին մեղադրում են, որ նրանք խուսափում են ռուսաց լեզուն սովորելուց, ուստի չեն յաճախում պետական դպրոցները:

Եւ ահա Պետերբուրգի լրագիրը, հենվելով պաշտօնական վիճակագրական տեղեկութիւնների վրա, հերքում է այդ բոլոր մեղադրանքները: Այդ փաստերը և թուականները ցոյց են տալիս, որ առաջաւոր Կովկասում և Անդրկովկասում հայերի թիւն է 985,460 հոգի. դրանցից քաղաքներում բնակվողների թիւն է 219,591 հոգի, իսկ մնացածը գիւղացիներ են, ուրեմն

Աւելի պարզն ասենք.—պարիարք և վարչութիւն՝ իրենց պաշտօնի բերմունքով, արդար պարտականութիւն մը կը դան առաջնորդական թափուր վիճակներն ան-առաջնորդ և ան-հովիւ չը թողնելու, և սակայն, մի և նոյն ժամանակ, անիրաւ և անխիղճ վարմունք մը կունենան այդ ընտրութեանց մէջ, թշուառութեան մատնուած առաջնորդական այդ վիճակները, բառին ամբողջին նշանակութեամբն՝ անարժան հովիւներու ձեռք յանձնելով, կարծես աւելի թշուառացնելու համար:—Օրմանեան պատրիարք, գոնէ զուտ ազգային այս կարևոր խնդրոյն մէջ, պէտք էր խիստ աղդեցիկ դեր մը կատարէր և իր պերճախօսութեան ամեն գրաւիչ ձևերը դուրս թափէր՝ համոզելու մայրաքաղաքիս մէջ գտնուող բոլոր եպիսկոպոսներն, որ այս անգամ գոնէ խիղճ ընէին իրենց կոչման համապատասխանող դիրքի մէջ գտնուելու: Ո՞չ ապաքէն եպիսկոպոսներ էին, ուխտեալ՝ իրենց անձերը դնելու ի վերայ ոչխարաց, ոչ ապաքէն նուիրական պաշտօնն ստանձնած են՝ հայր որբոց և դատաւոր այրեաց լինելու, աղքատները խնամելու և սգաւոր սիրտերն սփոփելու. միթէ ճիշդ ժամանակը չէր սոյն պարտականութիւնն իրենց զգացնելու, եթէ երբէք իրենք չէին կարող զգալ:

Ինչու Մելքիսեդեկներ, Վահրամներ, Դիմաքսեաններ, Գրիգորիաններ և այլն, որ եպիսկոպոսներ են՝ Հայաստանի դաւառները չեն ղրկուիր՝ որոնց ժողովուրդը Պրուսայի, Եդիպտոսի, Աղբիանուպոլսոյ թեմերէ աւելի պէտք ունի նոնց ներկայութեանը: Ինչու պատրիարքական ազդեցութիւնը չը գործադրուիր այդ առանձնաշնորհեալ եկեղեցականներուն վրայ, որպէս զի երթան և իրենց պարտականութիւնները կատարեն: Ինչու Դիմաքսեան եպիսկոպոսը, փոխանակ Աղբիանուպոլսոյ առաջնորդական տեղապահ կամ կանդիդատ ներկայացնելու և կամ Պերայի հայոց տուներն իրեն հանգստեան վայր ու հրապուրիչ հրապարակներն իր քայլերուն ճեմելիք ընծայելու, չը ղրկուիր իր նախկին թեմը՝ Երզնկայ, որուն վրայ եպիսկոպոս ձեռնադրուած է, և նորա տեղ, Երզնկայի ընդարձակ վիճակին համար, Երուսաղէմէն վարդապետ մուրալու ստիպողականութիւնը կը զգացուի. միթէ Աղբիանուպոլսոյ կամ Պերա՝ Երզնկայէ աւելի պէտք ունին Ն. Գերապատուութեան ներկայութեանն, և կամ այդ տեղերու օդը, ջուրը և այլն Երզնկայի օդէն ու ջուրէն աւելի օգտակար են սրբազանին թանկագին կենաց առողջութեանը: Իսկ Մելքիսեդեկներու, Վահրամներու անունները բնաւ չը կան յիշեալ տեղեկագրին մէջ:

Այսպէս ասա, երբ մէկ կողմէն եպիսկոպոսներու վրայ իրաւասութիւն ի գործ դնելու ձեռնհաս չը լինիր պատրիարքարանը՝ միւս կողմէն նոր եպիսկոպոսներ աւելցնելով՝ ազգին գլուխը նորանոր փորձանքներ հանելու մատնաւոր հոգածութիւն մը կը նշմարուի պատրիարքին տեղեկագրին մէջ, անշուշտ նպատակի մը համար. և սակայն ինչ որ ալ լինի նպատակը, զայն յառաջ տանելու համար՝ պէտք է որ խղճի, իրաւանց և արդարութեան օրէնքը բոլորովին

Թեամբ և իրական փաստերու արտայայտութեամբ՝ որով արժանի հանդիսացաւ, ի՝ մէջ այլոց, վարչագիտութեան doctorat-ին ալ:

Այսպէս զրելու պէտք չէ զարմանալ, վասն զի, ինչպէս տեսանք, Կրօնական ժողովոյ գերաշնորհներու և Քաղաքական ժողովոյ վեհաշուքներու կողմանէ նոյն տեղեկագիրն հաստատութիւն գտած և գործադրութիւնն հրամայուած է: Բայց քիչ թէ շատ խիղճ ունեցող մէկը՝ բոլորովին տարբեր կերպով կը մտածէ այդ չպարուած տեղեկագրին վրայ. ազգին, մանաւանդ թշուառացաւառացիներուն արդի վիճակը քիչ թէ շատ ուսումնասիրող և, ժողովրդեան բարոյական և նիւթական անհրաժեշտ պիտոյից հանդէպ, արդահատանաց դոյզն ինչ զգացում ունեցող մէկը՝ ծայրէ ի ծայր ծաղրելի, միանգամայն և ցաւալի կը գտնէ այդ տեղեկագիրը: Ծաղրելի՝ վասն զի այդու ուղղուած է, գրչի ճարտարութեամբ, կըլլեցնել ամենուն, թէ մեծ գործ մը տեսնուած և ծանր խնդիր մը փակուած է. իսկ ցաւալի՝ վասն զի, ինչպէս ազգապատկան արտաքին այլ և այլ գործառնութեանց մէջ ծայրայեղ հաճոյակատարութեամբ և մանուածոյ քաղաքականութեամբ, նոյնպէս և այս փոքրիկ խնդրոյ մէջ, կրնա՞ք ըսել, կատարեալ անխղճութեամբ խիստ անհոգ և քստմնելի դերեր խաղցուած են, մանաւանդ այսպիսի դժնդակ ժամանակի մը մէջ՝ ուր ոչ ատուածաքանութիւն, ոչ փիլիսոփայութիւն և ոչ պոլիկլոտութիւն (polyglotte) մէնքս հարկաւոր էր՝ որքան անկեղծութիւն, արդարութիւն և խղճի ուսումն արժան էր և կարևոր:

Ազգեցութիւնը չը գործադրուիր այդ առանձնաշնորհեալ եկեղեցականներուն վրայ, որպէս զի երթան և իրենց պարտականութիւնները կատարեն: Ինչու Դիմաքսեան եպիսկոպոսը, փոխանակ Աղբիանուպոլսոյ առաջնորդական տեղապահ կամ կանդիդատ ներկայացնելու և կամ Պերայի հայոց տուներն իրեն հանգստեան վայր ու հրապուրիչ հրապարակներն իր քայլերուն ճեմելիք ընծայելու, չը ղրկուիր իր նախկին թեմը՝ Երզնկայ, որուն վրայ եպիսկոպոս ձեռնադրուած է, և նորա տեղ, Երզնկայի ընդարձակ վիճակին համար, Երուսաղէմէն վարդապետ մուրալու ստիպողականութիւնը կը զգացուի. միթէ Աղբիանուպոլսոյ կամ Պերա՝ Երզնկայէ աւելի պէտք ունին Ն. Գերապատուութեան ներկայութեանն, և կամ այդ տեղերու օդը, ջուրը և այլն Երզնկայի օդէն ու ջուրէն աւելի օգտակար են սրբազանին թանկագին կենաց առողջութեանը: Իսկ Մելքիսեդեկներու, Վահրամներու անունները բնաւ չը կան յիշեալ տեղեկագրին մէջ:

Այսպէս ասա, երբ մէկ կողմէն եպիսկոպոսներու վրայ իրաւասութիւն ի գործ դնելու ձեռնհաս չը լինիր պատրիարքարանը՝ միւս կողմէն նոր եպիսկոպոսներ աւելցնելով՝ ազգին գլուխը նորանոր փորձանքներ հանելու մատնաւոր հոգածութիւն մը կը նշմարուի պատրիարքին տեղեկագրին մէջ, անշուշտ նպատակի մը համար. և սակայն ինչ որ ալ լինի նպատակը, զայն յառաջ տանելու համար՝ պէտք է որ խղճի, իրաւանց և արդարութեան օրէնքը բոլորովին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ ԹԱՓՈՒՐ ԹԵՄԵՐՈՒՄ

(Նամակ Կ. Պոլսից)

—

Կ. Պոլիս, մարտի 6/18-ին

Առաջնորդական թափուր վիճակներու ամենալուրջ խնդիրը, չնորհիւ Օրմանեան պատրիարքի, Կրօնական ժողովոյ ատենապետ՝ Գրիգորիս եպիսկոպոս Յովհաննիսեանի և Քաղաքական ժողովոյ անդամ Նորատունկեան Գաբրիէլ էֆէնդիի, վերջապէս ստացաւ իր օրինաւոր լուծումը:

Տարակոյս չը կար որ խնդիրն ոչ աստուածաբանական էր, ոչ փիլիսոփայական ու ոչ ալ գիտական, որ Օրմանեանն, առանց դժուարութեան բաղխելու, հաստեղով մը լուծէր, պէտք եղածն իր մատենադարանին մէջ փնտռելով ու գտնելով: Խնդիրը վարչական, և, շիտակը խօսելով իր բաղմակողմանի հանգամանքներովը քիչ մ'ալ պրոճկած լինելով, հարկ էր որ Օրմանեան այս բանին մէջ ալ իր ճարտարմտութիւնն ապացուցանելու համար՝ ամիսներ ու շաբաթներ զոհէր, և ժամանակին, վիճակին և ժողովրդական արդի կացութեան յարմարագոյն առաջնորդները կամ առաջնորդական տեղապահները գտնէր և իրենց տեղերը տեղաւորէր: Ամենապատիւ սրբազանը յաջողեցաւ այս բանին մէջ ալ և անհամբերութեամբ սպասուած իր տեղեկագիրն՝ ի հիացումն ամենուն, ի լոյս հանեց բառերու և ձևերու այնպիսի գեղեցիկ շարադասու-

հայերի մեծամասնութիւնը պատկանում է գիւղական, հողագործ դասակարգին և ապրում է գիւղերում։ Մի քանի գաւառներում այդ դասակարգը մեծ տոկոս է կազմում. Ախալքալաքի գաւառում—97,75%, Ալէքսանդրոպոլի գաւառում—98,22%, Էջմիածնի—97,29% և Շուշու—94,19%. առևտրով պարապվող և ապրող հայերի թիւն է մօտ 15,000, ուրեմն երկրի ամբողջ հայ աղգաբնակութեան 6%-ը միայն։ Երկրի արտաքին վաճառականութիւնը, ֆաբրիկային և գործարանական արդիւնահանութիւնը ոչ թէ հայերի, այլ օտարների ձեռքումն է գտնվում և արդիւնաբերութեան ոչ մի ճիւղում հայերը տիրապետող տեղ չեն բռնում։

Դալով կրթութեան, դուրս է գալիս, յամօթ հայերին մեղադրողների, որ այդտեղ էլ առաջնակարգ տեղ են գրաւում, որովհետև դպրոցներում սովորողների քանակութեան կողմից, հայերը երկրորդ տեղն են բռնում, չը նայելով որ աղգաբնակութեան մէջ նրանք միայն չորրորդ տեղն են գրաւում։

Սպասենք միւս փաստերին։

ՆԱՄԱԿ ԷՋՄԻԱԾՆԻՑ

—

մարտի 17-ին

Անցեալ անգամ հաղորդեցինք որ մարտի 2-ին Վեհափառ Կաթողիկոսը քարոզ խօսեց և, տարաբաղդաբար, եկեղեցում ժողովուրդը շատ սակաւ էր։ Ամսիս 16-ին, Ցնտեսի տօնին, կրկին խօսեց Վեհափառը, և այս անգամ եկեղեցում ժողովուրդ շատ կար։ Վեհափառ կաթողիկոսը բաւական երկար խօսեց գթութեան և ողորմութեան մասին։ Ինչպէս առաջին քարոզի, նոյնպէս և երկրորդի մէջ շատ գեղեցիկ ծիծաղաշարժ պատմութիւններ արեց. գեղեցիկ էր մանաւանդ անողորմ Պետրոսի պատմութիւնը (Յայտնութիւնից), որ բոլոր ներկայ եղողներին զուարճացրեց։ Այդ բաղմութեան մէջ, երբ Վեհափառը քարոզում էր և բոլոր միաբանները նրան չրջապատած ամենայն ուշադրութեան լսում էին՝ Սարգիս եպիսկոպոսը (Տէր-Գասպարեան) փառաւորապէս ծալապատիկ նստել էր դէմ յանդիման Վեհափառին և քնել. այդ բանը նկատեց Վեհափառը և դարձաւ ուղղակի սրբազանին ասելով. «Հա, Սարգիս սրբազան, նստել ես հա, շատ լաւ ես արել, նստիր, տեղդ երևի հանգիստ է»։ Այս խօսքերից յետոյ 15 րոպէ անց, հազիւ յիշեալ եպիսկոպոսը «բարեհաճեց» տեղից կանգնել... Վեհափառի քարոզին ներկայ էր և Աւարպատականի նոր առաջնորդը՝ սրբազան Խորէն Ստեփանէ, որին, քարոզի մէջ, ինքը կաթողիկոսը ի միջի այլոց ասեց հետևեալը. «Հա, Խորէն սրբազան, այստեղ ես. դու ինքդ լաւ դիտես, որ ոչ Խրիմեան Հայրիկ կարող է Խորէն սրբազան դառնալ, ոչ ալ Խորէն սրբազան՝ Հայոց Հայրիկ. կը տեսնես որ Խրիմեան Հայրիկ չի կարող քեզ պէս քարոզ խօսել. հա, այդ ճշմարիտ է. Հայրիկ ալ օր մը լաւ կը խօսէր, այժմ սիրտ չատ վշտացած է ամենուրեք տիրող դրութիւնից»։ Վեհափառը իր քարոզը վերջացնելով, յորդորեց միաբաններին, որ, ըստ չափու կարողութեան, իրանք էլ այնտեղ օգնելու դաղթականներին, որոնք վերջին ժամանակներս վանքը և Դաղարապատը լցրել են։

—եանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ղաթարի պղնձահանք, մարտի 6-ին

Բարձրագոյն թոյլատրութիւնը հրատարակվելուց յետոյ, այստեղ, Զանգեզուրի պղնձահանքերում, յօգուտ հայ դաղթականների ժողովեցի 405 ր. 25 կոպ. «Մշակի» խմբագրութեան ուղարկելու համար։ Բայց դեռ չուղարկած՝ հետևեց Կովկասեան պ. կառավարչապետի յայտնի կարգադրութիւնը, որի հիման վրա և ժողոված գումարը յանձնեցի ոստիկանութեան պրիստաւին, նրա պահանջման համաձայն, ուր հարկն է ուղարկելու համար։ Ուստի ուղարկելով սրա հետ նուիրատուների անուանական ցուցակը, խնդարհաբար խնդրում եմ քարեհաճէք տպագրել այն «Մշակի» էջերում։

Բաղդասար Շիրազեանց

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ երեկոյեան, մարտի 21-ին, Թիֆլիս եկաւ Կառավարչապետի օգնական գեներալ Ֆրեզէ։

—

Մեզ գրում են Երուսաղէմից, մարտի 2/14-ից, որ վերջապէս թիւրքաց սուլթանը յատկացրեց նախկին պատրիարք Իզմիրլեան Սրբազանին ամսական 20 ոսկի թոշակը, որի ստանալը ամեն մի նախկին պատրիարքի իրաւունքն է, նոյն իսկ թիւրքաց օրէնքով։

—

Մեր պարտքն ենք համարում հրատարել Թիֆլիսի նպաստող Մանուկեանցի ուշադրութիւնը հայ դաղթականների վրա. երկուսից մէկը—կամ գործ պէտք է տալ նրանց կամ փող՝ ապրելու համար։ Արդարանալ թէ փող չը կայ, կամ ասել միայն «գնացէք և գործ գտէք»՝ կը նշանակի, առնուազը լուրջ կերպով չը վերաբերվել դէպի այն մեծ պարտականութիւնը, որ դրված է հասարակութեան վրա։

—

Այսօր, շաբաթ, մարտի 22-ին, երեկոյեան 7½ ժամին, Դումայի դահլիճում նշանակված է Հրատարակչական ընկերութեան ընդհանուր ժողովը։

—

ԹԷՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «Զը նայած որ վաղուց մեր հասարակութիւնը գիտէ Բարձրագոյն թոյլատրութեան մասին, սակայն ոչ ոք մեզանից չէ մտածում իր լսման տալ թշուառ գաղթականին։ Բարեկենդանի օրերը անցան քէֆերի մէջ. այդ ճոխ սեղանների առաջ, ազահ կերուխումի մէջ, գէթ մէկը չը մտածեց, որ հայ գաղթականը մի կտոր չոր հացի կարօտ է։ Ինչի՞ ենք սպասում մենք. արդեօք նրան, որ ինքը կառավարութիւնը ստիպէ մեզ մեր քսակներից մի քանի կօպէկ հանելու։ Մի քանի ժամանակ առաջ այստեղ մի քանի անձանց մէջ միտք ծագեց բարեկենդաններին մի գրական երեկոյթ սարքել յօգուտ հայ գաղթականների։ Միտքը համակրելի էր, բայց թէ՞նչ օգուտ որ չիրագործվեց. ով էր մեղաւոր. ի հարկէ, հասարակութիւնը։ Եթէ մենք եռանդով մասնակցութիւն ընդունէինք այդ գործի մէջ, եթէ մենք հեռացնէինք մեր միջից գէթ առ ժամանակ մեր անձնական թշնամութիւնը և հաչիները, կասկած չը կայ, որ երեկոյթը կը կայանար և ժողովված դրամով գոնէ կը կարողանայինք սրբել մեզանից այն ամօթը, որը այժմ դրոշմված է մեր ճակատին։—Այն ժամանակ ոչինչ չարեցինք և մինչև այժմ էլ ոչինչ չենք անում»։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Ամեն տեղից հաղորդում են, որ պատրաստութիւններ են տեսնում և քաղաքները մաքրում ժանտախտի առաջն առնելու համար. միայն կարսն է, որ ուղում է բացառութիւն կազմել ընդհանուրից։ Մեր փողոցներում տիրում է զարմանալի կեղտոտութիւն. բացի 4—5 մեծ փողոցներից՝ միւսներով անցնել չէ կարելի, այնքան կեղտոտ են։ Կարսը, իբրև թիւրքաց հին քաղաք, զուրկ է կանոնաւոր փողոցներից, մաքրութեան վրա հսկողներն էլ կարծես ուշ են դարձնում միայն 4—5 մեծ փողոցների վրա, իսկ մնացած մասը մատնել են կատարեալ անուշադրութեան։ Կարծէք մեր ժողովուրդը որոշել է կեղտոտութեամբ դիմադրել ժանտախտին և ոչ մի միջոց չէ խնայում կեղտի մէջ պահել փողոցներն ու տները։ Այս անախորժ լուրի հետ միասին ուրախալի է հաղորդել հետևեալ փաստը.—մարտի 8-ին բժ. Վէնեամինով դասախօսեց ժանտախտի մասին «Մարիամեան» օրիորդաց դպրոցի աշակերտուհիների և նրանց ծնողների համար։ Մեր միւս բժիշկներն էլ արդեօք պիտի հետևեն այդ օրինակին և ժողովրդեան հասկանալի դասախօսութիւններ պիտի կարդան, թէ ոչ»։

—

ԳԱՐԱՍՈՒԲԱՋԱՐԻՑ մեզ գրում են. «Ուրախալի է, որ մեր երեք հաչտեսները՝ պ. պ. Մ. Սելինեան, Գ. Աղթոնճեան և Յ. Պապուճեան, վերջապէս պատրաստվում են հրաժարական տալ։ Այդ պարոններից դժուար թէ մէկն էլ յիշելիս լինի իր ընարութեան տարեթիւը, միայն այսքանը իմացանք պ. Պապուճեանից, թէ քսան տարին կը լրանայ, որ այդ ծառայութիւնն է մատուցանում։ Ամսոս, շատ լաւ ու բարի մարդիկ էին... հաչիւ տուողին Աստուծու արքայութիւնն էին ցանկանում, իսկ չը տուողին (ի հարկէ յետևից)՝ դժոխք։ Սրանց օրով գտնվեցան և այնպիսի աղա-հոգաբարձուներ, որոնք բացի ծառայութիւն մատուցանելուց յայտնի չէ թէ ինչ արեցին ուսումնարանի նուիրատուութեան մասնանը, մինչև իսկ կրաւ հարիւր բուբլիանոց ստացագիրը։ Մի խօսքով, երեքն էլ, ըստ անմահ Պատկանեանի՝ «իրաւունք ունին ըլլալ երկնաւոր փառքի արժանի»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Անգլիական պարլամենտում, մարտի 10-ի նիստում.

Ստեվէնսօն (դիմելով արտաքին գործերի մինիստրի օգնականին). կարող էք արդեօք տեղեկութիւն տալ այն մասին, թէ մօտաւորապէս երբ կը տրվի սուլթանին բէֆօրմների ծրագիրը, որը վեց մեծ պետութիւնների ներկայացուցիչները կազմել են։

Կէրզօն. Այժմ ես չեմ կարող հաղորդել թէ երբ մենք կըստանանք բէֆօրմների ծրագիրը։

Ստեվէնսօն. Արդեօք հաստատել են վեց պետութիւնները իրանց ներկայացուցիչների կազմած ծրագիրը։

Կերզօն. Ոչ, պարոն, դա դեռ ես քննվում է։

—

Թոքատի դէպքերի մասին Ամասիայի ֆրանսիական հիւպատոսը հեռագրել է մարտի 8-ին դեսպան Կամբոնին հետևեալը. «Կրետական գործերը սաստիկ յուզմունք են առաջ բերում մուսուլմանների մէջ։ Երկիւղ եմ կրում, որ խոշոր անկարգութիւններ պատահեն։ Թոքատում, Սիվասի վիլայէթում, երեկ գաղանութիւններ տեղի ունեցան։ Այս հեռագրի բովանդակութիւնը ֆրանսիական դեսպանատան թարգմանը հաղորդեց միւս դեսպանատներին։

—

Կ. Պոլսից հեռագրում են «Neue Freie Presse» լրագրին մարտի 9-ից. «Թէև ոստիկանութեան այս օրերս ստացած տեղեկութիւնը այն մասին, թէ հայերը նոր ցոյցեր են պատրաստում, վաղամեռ դուրս եկաւ՝ այնու ամենայնիւ ոստիկանութիւնը նախազգուշութեան լայն միջոցներ է ձեռք առել։ Հաստատված է, որ շատ կասկածելի հայեր, որոնք անհետացել էին Կ. Պոլսից անցեալ տարվայ օգոստոսի դէպքերից առաջ՝ նորից յետ են եկել։ Ոստիկանութիւնը չէ կարող նրանց կալանաւորել, որովհետև նրանք օտար անցագիրներ ունեն։ Այդ պատճառով լրտեսների մի խումբ հայերի մեծամասնութիւնը պատկանում է գիւղական, հողագործ դասակարգին և ապրում է գիւղերում։ Մի քանի գաւառներում այդ դասակարգը մեծ տոկոս է կազմում. Ախալքալաքի գաւառում—97,75%, Ալէքսանդրոպոլի գաւառում—98,22%, Էջմիածնի—97,29% և Շուշու—94,19%. առևտրով պարապվող և ապրող հայերի թիւն է մօտ 15,000, ուրեմն երկրի ամբողջ հայ աղգաբնակութեան 6%-ը միայն։ Երկրի արտաքին վաճառականութիւնը, ֆաբրիկային և գործարանական արդիւնահանութիւնը ոչ թէ հայերի, այլ օտարների ձեռքումն է գտնվում և արդիւնաբերութեան ոչ մի ճիւղում հայերը տիրապետող տեղ չեն բռնում։

Դալով կրթութեան, դուրս է գալիս, յամօթ հայերին մեղադրողների, որ այդտեղ էլ առաջնակարգ տեղ են գրաւում, որովհետև դպրոցներում սովորողների քանակութեան կողմից, հայերը երկրորդ տեղն են բռնում, չը նայելով որ աղգաբնակութեան մէջ նրանք միայն չորրորդ տեղն են գրաւում։

Սպասենք միւս փաստերին։

ՆԱՄԱԿ ԷՋՄԻԱԾՆԻՑ

—

մարտի 17-ին

Անցեալ անգամ հաղորդեցինք որ մարտի 2-ին Վեհափառ Կաթողիկոսը քարոզ խօսեց և, տարաբաղդաբար, եկեղեցում ժողովուրդը շատ սակաւ էր։ Ամսիս 16-ին, Ցնտեսի տօնին, կրկին խօսեց Վեհափառը, և այս անգամ եկեղեցում ժողովուրդ շատ կար։ Վեհափառ կաթողիկոսը բաւական երկար խօսեց գթութեան և ողորմութեան մասին։ Ինչպէս առաջին քարոզի, նոյնպէս և երկրորդի մէջ շատ գեղեցիկ ծիծաղաշարժ պատմութիւններ արեց. գեղեցիկ էր մանաւանդ անողորմ Պետրոսի պատմութիւնը (Յայտնութիւնից), որ բոլոր ներկայ եղողներին զուարճացրեց։ Այդ բաղմութեան մէջ, երբ Վեհափառը քարոզում էր և բոլոր միաբանները նրան չրջապատած ամենայն ուշադրութեան լսում էին՝ Սարգիս եպիսկոպոսը (Տէր-Գասպարեան) փառաւորապէս ծալապատիկ նստել էր դէմ յանդիման Վեհափառին և քնել. այդ բանը նկատեց Վեհափառը և դարձաւ ուղղակի սրբազանին ասելով. «Հա, Սարգիս սրբազան, նստել ես հա, շատ լաւ ես արել, նստիր, տեղդ երևի հանգիստ է»։ Այս խօսքերից յետոյ 15 րոպէ անց, հազիւ յիշեալ եպիսկոպոսը «բարեհաճեց» տեղից կանգնել... Վեհափառի քարոզին ներկայ էր և Աւարպատականի նոր առաջնորդը՝ սրբազան Խորէն Ստեփանէ, որին, քարոզի մէջ, ինքը կաթողիկոսը ի միջի այլոց ասեց հետևեալը. «Հա, Խորէն սրբազան, այստեղ ես. դու ինքդ լաւ դիտես, որ ոչ Խրիմեան Հայրիկ կարող է Խորէն սրբազան դառնալ, ոչ ալ Խորէն սրբազան՝ Հայոց Հայրիկ. կը տեսնես որ Խրիմեան Հայրիկ չի կարող քեզ պէս քարոզ խօսել. հա, այդ ճշմարիտ է. Հայրիկ ալ օր մը լաւ կը խօսէր, այժմ սիրտ չատ վշտացած է ամենուրեք տիրող դրութիւնից»։ Վեհափառը իր քարոզը վերջացնելով, յորդորեց միաբաններին, որ, ըստ չափու կարողութեան, իրանք էլ այնտեղ օգնելու դաղթականներին, որոնք վերջին ժամանակներս վանքը և Դաղարապատը լցրել են։

—եանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ղաթարի պղնձահանք, մարտի 6-ին

Բարձրագոյն թոյլատրութիւնը հրատարակվելուց յետոյ, այստեղ, Զանգեզուրի պղնձահանքերում, յօգուտ հայ դաղթականների ժողովեցի 405 ր. 25 կոպ. «Մշակի» խմբագրութեան ուղարկելու համար։ Բայց դեռ չուղարկած՝ հետևեց Կովկասեան պ. կառավարչապետի յայտնի կարգադրութիւնը, որի հիման վրա և ժողոված գումարը յանձնեցի ոստիկանութեան պրիստաւին, նրա պահանջման համաձայն, ուր հարկն է ուղարկելու համար։ Ուստի ուղարկելով սրա հետ նուիրատուների անուանական ցուցակը, խնդարհաբար խնդրում եմ քարեհաճէք տպագրել այն «Մշակի» էջերում։

Բաղդասար Շիրազեանց

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ երեկոյեան, մարտի 21-ին, Թիֆլիս եկաւ Կառավարչապետի օգնական գեներալ Ֆրեզէ։

—

Մեզ գրում են Երուսաղէմից, մարտի 2/14-ից, որ վերջապէս թիւրքաց սուլթանը յատկացրեց նախկին պատրիարք Իզմիրլեան Սրբազանին ամսական 20 ոսկի թոշակը, որի ստանալը ամեն մի նախկին պատրիարքի իրաւունքն է, նոյն իսկ թիւրքաց օրէնքով։

—

Մեր պարտքն ենք համարում հրատարել Թիֆլիսի նպաստող Մանուկեանցի ուշադրութիւնը հայ դաղթականների վրա. երկուսից մէկը—կամ գործ պէտք է տալ նրանց կամ փող՝ ապրելու համար։ Արդարանալ թէ փող չը կայ, կամ ասել միայն «գնացէք և գործ գտէք»՝ կը նշանակի, առնուազը լուրջ կերպով չը վերաբերվել դէպի այն մեծ պարտականութիւնը, որ դրված է հասարակութեան վրա։

—

Այսօր, շաբաթ, մարտի 22-ին, երեկոյեան 7½ ժամին, Դումայի դահլիճում նշանակված է Հրատարակչական ընկերութեան ընդհանուր ժողովը։

—

ոսնակոթիս լինի և արժանաւորն ու անարժանն ի նկատ չառնուին։ «Երկար տարիներէ հետէ եպիսկոպոսական ձեռնադրութեանց տեղի չունենալը և եպիսկոպոսական դասուն հեղհեղէ նուազիլը», զոր կըսէ Օրմանեան, միթէ օրինաւոր պատճառ կրնան համարուիլ անարժանները եպիսկոպոսացման։ Որոնք են այդ եպիսկոպոսացու վարդապետները։—Յանկին գլուխն անցեր է նախ Պետրոս վարդապետ Բագրատունի՝ խարբերդի անվերջանալի պատուհասը, որ Վանայ Պօղոս եպիսկոպոսի հետ երկուորեակ մը կը կազմէր, երկուքն ալ կարծես աղգին գլխուն պատիժ լինելու համար մասնաւորապէս ծնած.—Պօղոսը կորաւ գնաց, Պետրոսը դժբախտաբար դեռ կը մնայ և եօթանասուն և հինգ տարեկան ծեր մ'է՝ երիտասարդական մոլութեանց ամեն կորովը ունենալով իր վրա։ Այս մարդուն կեանքի նկարագիրն եթէ ընեմք իր ամեն պարագայներովը, հատորներ պէտք է լեցնել։ 1865 տարուայ ընթացքէն սկսած մինչև ցայսօր այդ եկեղեցականի մասին ազգային պատրիարքարանի արձանագրութեանց մէջ գտնուածները՝ պերճախօս վկաներ են գրածներուս հաստատութեանն։ Իր ապականալ վարքին և ի գործ դրած աններելի զեղծումներուն համար երկիցս աքսորուած պատրիարքարանի կողմէ, մի անգամ ազգութիւնն ալ եկեղեցիին հետ մէկտեղ ուրանալով՝ լատինացած, մի անգամ կաթոլիկ եղած, մի անգամ ևս բողոքական դարձած, և, եթէ չէ սահմանած՝ գոնէ փորձած է՝ տարիներով մզկիթի մը հոգաբարձութիւնն ընելով խարբերդի մէջ։ Իսկ 1889-ին խարբերդի առաջնորդ եպիսկոպոսին կողմէն՝ որ կարծեմ Շիշմանեանն ըլլալու է, կարգալոյծ հրատարակուած և յետոյ, հնորհիւ Աշըղեան պատրիարքի, հակառակ եկեղեցւոյ օրինաց, ներուելով՝ առաջնորդ հաստատուած խարբերդի նման ընդարձակ վիճակին։ Ահա այս Պետրոսն է՝ զոր Օրմանեան՝ իբրև եպիսկոպոսացու կը ներկայացնէ ազգին՝ առանց երբէք խիղճ ընելու։ Ամօթ չէ։

Երրորդն է Իզմիրի առաջնորդը՝ Ներսէս վարդապետ Արսլանեան, որոյ եպիսկոպոսանալը, եթէ հարկ է՝ Իզմիրի թեմական ժողովուրդը կարող է որոշել ըստ օրինի և ոչ պատրիարքարանն իւրովանն և եթ։

Երրորդն է Կեսարիոյ առաջնորդը՝ Տրդատ վարդապետ Պալեան, թիւրքամոլ եկեղեցական մը, որ վերջին դէպքերու ատեն, ի նպաստ թուրքերու բաւական ծանր դերեր կատարեց, զաւեր նիւթեց և ատելի դարձաւ իր բոլոր ժողովրդեան։ Շատ ախուր ու ցաւալի լուրեր հասած են այս եկեղեցականին վրա. կըսուի թէ մինչև իսկ մատնիչի դեր կը կատարէ եղեր և այլն, իրողութիւններ որ չեն կրնար արդարանալ ընաւ ազգին դատաստանին առջև։ Իսկ իր ընդարձակ գոռոզութիւնն ու յաւակնութիւնն եպիսկոպոսութեան իսկ չը դիջանիր։ Օրմանեան սրբազան պէտք է ղգոյշ կենայ, զի այնպիսի ժամանակի մէջ կապրինք այժմ որ միշտ անակնկալներ իրարու կը յաջորդեն։ Զը մոռնամք ըսելու թէ՝ Տրդատ վարդապետ Երուսաղէմի միաբան ալ է։ Միաբանութիւնն արդեօք պիտի վկայէ։

Իսկ չորրորդն է՝ Գաբրիէլ վարդապետ Ձէվահիրճեան՝ պատրիարքի փոխանորդ հայր-սուրբը, Նորատունկեանի ազգականը՝ (that is the question), հէքեաթասպասում քարոզիչը։ Ո՛չ առաջնորդ եղած է և ոչ ալ դաւառական ո և է պաշտօն մը վարած։ Պատրիարքական փոխանորդութեան համար ալ զինքը եպիսկոպոս ձեռնադրելու պէտք չը կայ. արդ՝ հայր-սուրբին եպիսկոպոսացմանն ինչու այդքան փոյթ... Այս հարցման պատասխանը շատ դիւրին է.—վասն զի Նորատունկեանի ազգականն է, վասն զի ջանքեր կան Եգիպտոսի առաջնորդ կարգելու զինքը։ Օրմանեան՝ զայն Եգիպտոսի առաջնորդութեան կանդիդատ նշանակած է Բարթողիմէոսի և Սափրիչեան Տիմոթէոսի հետ, երկուքն ալ այնպիսի եպիսկոպոսներ, որք իրենց անցեալովն յայտնի են եգիպտարնակ հայոց, և Օրմանեան լաւ գիտէ զայս, ուստի կը մնայ ինքը միայն՝ Ձէվահիրճեան, որ անշուշտ պատրիարքական և էֆէնդիական ազդեցութիւններով՝ այժմէն իսկ Եգիպտոսի առաջնորդ կրնայ նկատուիլ. բայց դժբախտաբար թէ բարեբախտաբար, Եգիպտոսի հայերն ալ այնքան վարպետ են, որ անմիջապէս կը զգան պատրիարքարանի խաղերն ու կատակները։ Այժմ դիւրին է համոզուիլ թէ Ձէվահիրճեանի եպիսկոպոսացու ընկերներն՝ Պետրոս, Ներսէս և Տրդատ, ոչ իրենց ունեցած արժանիքին համար և ոչ ալ Օրմանեանի ցոյց տուած պատճառին զօրութեամբ՝ այլ միմիայն Ձէվահիրճեանի գործին յաջողութեանն ու Նորատունկեան էֆէնդիին քէյֆը բերելու համար, հնարիւ ամենապատիւ ս. պատրիարք հօր, իրենք ալ եպիսկոպոսանալով քէյֆ պիտի ընեն։ Ազգին աչքը լոյս...

Իսկ թէ մնացեալ վիճակներուն համար որպիսի եկեղեցականներ ընտրուած են.—միայն մի քանի գլխաւորներն յիշեմք, մնացեալն ինքնին կը յայտնուի։

Առաջնորդական վիճակներուն մէջ ամենէն կարևոր տեղը կը բռնէ Էրզրում, և որովհետև առաջնորդը, Շիշմանեան եպիսկոպոս, մէկ տարիէ աւելի է, որ Երուսաղէմ աքսորուած է սուլթան Համիդի իրաւունքով՝ այժմ իբրև առաջնորդական տեղապահ կը դրկուի այնտեղ՝ պատպականութենէ դարձող Ցովսէփ վարդապետ Այվազեանը։ Բայց Շիշմանեան ոչ հրաժարեալ է և ոչ հրաժարեցուցեալ. նա բռնութեամբ և հարիւրաւոր զինուորներով մայրաքաղաքը բերուած և ընդ հսկողութեամբ Երուսաղէմ դրկուած է, նա մինչև Իզմիրեան սրբազանի հրաժարելը ճանչցուած է միշտ Էրզրումի առաջնորդ, ուստի վարչական և տնտեսական օրէնքներու դէմ մեծ սխալ մը կը գործէ Օրմանեան՝ տեղապահ մը դրկելով այնտեղ. կարող էր փոխանորդ մը դրկել, իսկ անհաւանելի մեղք մը կը գործէ՝ երբ Այվազեանի պէս մէկու մը կը յանձնէ մի ընդարձակ և կարևոր վիճակի ժողովրդեան հովութիւնը։ Այվազեան այն վարդապետն է՝ որ յետ Մելքիսեդեկ եպիսկոպոսի՝ Իզմիրի առաջնորդական տեղապահ եղաւ, ժողովուրդը սաստիկ զայրանալով վարդապետին դարձուցած խաղերուն և ի գործ դրած մեքենայութեանցը, քիչ

ամբողջ զօրք հսկում է կասկածելի մարդկանց ամեն մի քայլին: Ոստիկանութեան մինիստրը և Պերայի կառավարիչը ամեն մի ժամ հաշիւ են ստանում այդ մարդկանց իւրաքանչիւր քայլի մասին: Բացի հայոց պատրիարքից, սպառնական նամակ է ստացել հայկական կոմիտէից և Արթին փաշայի որդի Տիգրան բէյը: Գերմանական մի այլ լրագիր հաղորդում է հետեւեալը. «Սպանացի Ռենեոյի կալուածում, կ. Պոլսի մօտ, այս օրերս գտնվել են չատ ռումբեր:

—

Անգլիական դեսպան Կէրբիի Բ. Դրան տուած յիշատակագիրը Թօքատի կոտորածի մասին՝ այնպիսի խիստ սեռով է գրված, որի նմանը երբէք չէ եղած. Անատոլիայի անցեալ տարվայ կոտորածների հեղինակները անպատիժ մնալով՝ սպասում է որ թիւրքերի գազանութիւնները քրիստոնեաների դէմ կը վերանորոգվեն: Բէյտերի գործակալութիւնը հաստատում է, որ դեսպանների առաջարկութիւնները առանձին ազդեցութիւն չը գործեցին սուլթանի վրա, որովհետեւ նա իրան ապահով է կարծում մեծ պետութիւնների խիստ ճնշողութիւնից: Թօքատում մինչև վերջերս անկարգութիւններ տեղի չունեցան շնորհիւ զինուորական նահանգապետ Մուստաֆա փաշայի, որը, մի ամիս առաջ, արձակվեց պաշտօնից:

—

Ինչպէս յայտնի է՝ սուլթան Աբդուլ Համիդ հարկաւոր է համարել իր գահի բարձրութիւնից շնորհակալութիւն յայտնել մեծ պետութիւններին այն աջակցութեան համար, որ այդ պետութիւնները ցոյց տուին նրան: Ահա այն պաշտօնական յայտարարութիւնը, որ հրատարակվել է կ. Պոլսում. «Այն ընթացքը, որ բռնեց Ցունաստանը, զօրք ուղարկելով Կրետէ, խանգարում է միջազգային իրաւունքը: Թիւրքիայի ամբողջութիւնը երաշխաւորող մեծ պետութիւնները որոշել են պաշարման ենթարկել Կրետէն յօգուտ Թիւրքիայի, և այդ վճիռը հետանք է սուլթանի գործունէութեան եղանակի: Մեծ պետութիւնների բարեկամութիւնը և Բ. Դրան վերաբերմամբ ունեցած հոդածութիւնը արժանի են երախտագիտութեան վերջինիս կողմից»:

—

Կ. Պոլսից հետեւալ տեղեկութիւններն են հաղորդում ֆրանսիական մի լրագրի. «Ոչ մի ժամանակ ռուսաց ազդեցութիւնը այնքան գերակշիռ չէ եղել Եղբզ-Ֆիսկում, ինչպէս այժմ: Միայն պ. Նելիդովի խորհուրդները կարողացան համոզել օսմանեան կառավարութիւնը՝ հանել զօրքերը Հայաստանից և ուղարկել հելլենական սահմանագլուխը: Հէնց այն օրը, երբ գենդպետ Վասսոսի Կրետէ մտնելու լուրը հասաւ պալատին՝ մեծ վիզիրը և արտաքին գործերի մինիստրը կանչվեցան պալատ և այդտեղից, սուլթանի հրամանները ստանալուց յետոյ, նրանք ուղիղ գնացին ռուսաց դեսպանատունը: Պ. Նելիդով նրանց հաստատեցրեց, որ Թիւրքիան կարող է յուսալ իր կառավարութեան չիտակ աջակցութեան վրա և խորհուրդ տուեց ուղարկել անմիջապէս Թեսալիայի սահմանները սէրասկէրիատի բոլոր զինուորական ոյժերը: Մեծ վեզիրը նկատեց, որ չէ կարելի դատարկել Հայաստանը—Թիւրդստանը զօրքից, որովհետեւ երկիւղ կայ, որ հայկական յեղափոխական կոմիտէները դրանից օգուտ կը քաղեն և կապստամբեցնեն իրանց դատանակիցներին: Ռուսաց դեսպանը պատասխանեց, որ հայերը հանգիստ կը մնան, որովհետեւ այն խիստ դասը, որ նրանք ստացան վերջերս՝ բոլորովին զսպել է նրանց յեղափոխական ձգտումները: Գալով Ռուսաստանին, օսմանեան կառավարութիւնը կարող է բոլորովին հանդարտ լինել այդ կողմից և յոյս ունենալ նրա աջակցութեան վրա»:

ՆԱՄԱԿ ԲՈԼԳԱՐԻԱՅԻՑ

Սիլիստրէ, մարտի 6-ին

Եւրոպական մի քանի թերթեր, մասնաւորապէս «Daily News», տեղէս տրուած հեռագիր մի հրատարակած են, որով Պուլկար—Ռումանական պատերազմի մի հոտեր զգալի կը լինին: Ռումէն կառավարութիւնը իր զօրքը կը համախմբէ Տօպրուճայի մէջ, և այս դէպ Պուլկարիա առաջ խաղացում մի փորձելով, «համեղ պատառ մի» խլելու յայտանշան կարելի է համարել: Թէպէտ երկու ազգերի քաղաքական յարաբերութիւնները լարուած դրութեան հասած չեն, սակայն ինչ որ ալ լինի, տեղի ունեցող խաւլ պատրաստութիւնները, և սահմանագլուխների մերձաւոր քաղաքներին մէջ նշմարվող զգուշական միջոցները՝ պայծառ կերպով ցոյց կը տան որ որոտի մի երկիւղ կը տիրէ այս երկու հարեան ցեղերին մէջ: Մի քանի ժամանակ առաջ Պուլկար կառավարութիւնը վեց թնդանօթ խրկած էր ատ, անցած շաբաթի ընթացքին մէջ վեց ևս խրկուեցան. խօսուածքին նայելով, վեց ևս պիտի խրկէ, որով տասնութ թնդանօթ, կազմ վիճակի մէջ, պիտի պաշտպանեն քաղաքիս, ռումանական սահմանագլուխների մօտ Օսթրով գիւղաքաղաքի ճամբայով՝ Սիլիստրէի վրա լինելի յարձակումին դէմ:

Պալքանեան թերակղզիի այս կողմը մինչ Ռումանիան Պուլկարիայի սահմանները կրծելու ճիգեր կուղէ անել՝ անդին երկրորդ մի հարեւան կառավարութիւն՝ սերպական Ալէքսանդր թագաւոր կարեւոր կը համարի մերձենալ Ֆերդինանդ իշխանին կառավարութեան և Սոֆիա մայրաքաղաքը պատուել իր արքայական ներկայութիւնով. յարմար առիթով դիտել կը տրուի թէ առաջինն է որ մի եւրոպական վեհապետ, պուլկարական անկախութիւնն ատին, կայցելէ Սոֆիա:

Եւրոպական թերթեր, ասցա հետ և «Temps» ցոյց կը տան որ Պալքանեան թերակղզիի գործերին բարւոք կարգադրումին համար՝ Պուլկարիայի ձայնը սկսած է մեծ կշիռ ստանալ: Պուլկարօ—Սերպ դաշնակցութիւն անխուսափելի կը թուի. բան մի, որ նեղսիրտ Աւստրիային, Գերմանիային և հատատիսր Ալպոնի հայրենին չը գար անշուշտ. վճռապէս դժուար կը լինէր և յարմար նկատողութիւն մի անել Ֆրանսայի համար. ճշմարտագոյնը սա է սակայն որ, այս այցի առիթով «Temps» լրագիրը պարզապէս՝ «անցած տարի Ֆերդինանդ իշխանի ի Պելկրատ արած այցի մի քաղաքավարական պարտականութեան փոխարինումը» կը տեսնէ: Ամեն պարագայի մէջ երկու սլաւ քոյր ազգերի մէջ մի այս տեսակ մերձեցում, 1885-ի ցաւալի ընդհարումէն ետ, ի հարկէ, աւելի ուժ կրնայ տալ երկուքին ալ Պալքանի մէջ ապագայ իրաւունքների ստացումին և կրնայ նոցա գերակշռութիւնը իրապէս բարձրացնել:

Շ. Կ.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, Մարտի 5/17-ին

Շահից ստացած հեռագրի համաձայն՝ Ատրբատականի նահանգապետ Ամինը—Դովլէն վաղը քաղաքիս կուղևորվի դէպի Թեհրան, ուր նրան սպասում է պարսից կառավարութեան նախարարական պաշտօններից ամենամեծը, այն է «Վազիրը—Ազգամութիւնը», որ զրեթէ նոյն պաշտօնն է ինչ որ Սադրազամութիւնը: Ամիր-Դովլէն կը մեկնի վաղը երեկոյեան, ժամը երեքին և գիշերը կիջնայ «Սանար-Դիվան» կոչված այգում, որտեղ կը մնայ մինչև երկուշաբթի առաւօտը, և ապա կը շարունակէ իր ճանապարհը դէպի Թեհրան: Նրա փոխանորդ՝ իր կամքով՝ այժմ նշանակված է Ամինը—Վուզարէն, իսկ նոր նահանգապետ նշանակված է Ատրպատականի նախկին հռչակաւոր նահանգապետը, այսինքն Ամիր-Նիզամը, որ իր պաշտօնատեղից, ուր իբրև աքսորված՝ նահանգապետի պաշտօն էր վարում, արդէն ճանապարհվել է՝ Թաւրիզ գնալու համար:

Ատրպատականի այս նախկին նահանգապետը շատ ժողովրդականութիւն է վայելում Ատրպատականում, և ժողովուրդը չափազանց ուրախացել է նրա գալստեան համբաւը լսելով և անհամբեր սպասում է այն օրվան, երբ նա բաղդ կունենայ դիմաւորելու իր նախկին սիրելի նահանգապետին, որի տարիքն արդէն 70-ի է հասել բայց որի առկանութիւնը և եռանդը պահպանում են իրանց վաղեմի դրութիւնը:

Ատրպատականի այժմեան նահանգապետի հետ, պուլկարական անկախութիւնն ատին, կայցելէ Սոֆիա:

Եւրոպական թերթեր, ասցա հետ և «Temps» ցոյց կը տան որ Պալքանեան թերակղզիի գործերին բարւոք կարգադրումին համար՝ Պուլկարիայի ձայնը սկսած է մեծ կշիռ ստանալ: Պուլկարօ—Սերպ դաշնակցութիւն անխուսափելի կը թուի. բան մի, որ նեղսիրտ Աւստրիային, Գերմանիային և հատատիսր Ալպոնի հայրենին չը գար անշուշտ. վճռապէս դժուար կը լինէր և յարմար նկատողութիւն մի անել Ֆրանսայի համար. ճշմարտագոյնը սա է սակայն որ, այս այցի առիթով «Temps» լրագիրը պարզապէս՝ «անցած տարի Ֆերդինանդ իշխանի ի Պելկրատ արած այցի մի քաղաքավարական պարտականութեան փոխարինումը» կը տեսնէ: Ամեն պարագայի մէջ երկու սլաւ քոյր ազգերի մէջ մի այս տեսակ մերձեցում, 1885-ի ցաւալի ընդհարումէն ետ, ի հարկէ, աւելի ուժ կրնայ տալ երկուքին ալ Պալքանի մէջ ապագայ իրաւունքների ստացումին և կրնայ նոցա գերակշռութիւնը իրապէս բարձրացնել:

Շ. Կ.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, Մարտի 5/17-ին

Շահից ստացած հեռագրի համաձայն՝ Ատրբատականի նահանգապետ Ամինը—Դովլէն վաղը քաղաքիս կուղևորվի դէպի Թեհրան, ուր նրան սպասում է պարսից կառավարութեան նախարարական պաշտօններից ամենամեծը, այն է «Վազիրը—Ազգամութիւնը», որ զրեթէ նոյն պաշտօնն է ինչ որ Սադրազամութիւնը: Ամիրի-Դովլէն կը մեկնի վաղը երեկոյեան, ժամը երեքին և գիշերը կիջնայ «Սանար-Դիվան» կոչված այգում, որտեղ կը մնայ մինչև երկուշաբթի առաւօտը, և ապա կը շարունակէ իր ճանապարհը դէպի Թեհրան: Նրա փոխանորդ՝ իր կամքով՝ այժմ նշանակված է Ամինը—Վուզարէն, իսկ նոր նահանգապետ նշանակված է Ատրպատականի նախկին հռչակաւոր նահանգապետը, այսինքն Ամիր-Նիզամը, որ իր պաշտօնատեղից, ուր իբրև աքսորված՝ նահանգապետի պաշտօն էր վարում, արդէն ճանապարհվել է՝ Թաւրիզ գնալու համար:

Ատրպատականի այս նախկին նահանգապետը շատ ժողովրդականութիւն է վայելում Ատրպատականում, և ժողովուրդը չափազանց ուրախացել է նրա գալստեան համբաւը լսելով և անհամբեր սպասում է այն օրվան, երբ նա բաղդ կունենայ դիմաւորելու իր նախկին սիրելի նահանգապետին, որի տարիքն արդէն 70-ի է հասել բայց որի առկանութիւնը և եռանդը պահպանում են իրանց վաղեմի դրութիւնը:

Ատրպատականի այժմեան նահանգապետի հետ Վահան վարդապետ Տէր Մինասեան Պարտիզակցին, ոստիկանութեան նախորդ նախարար Նազիմի սրտակից մտերիմը... Կրնամք հակընայ՝ թէ պատրիարք կամ վարչութիւն, յետ հրաժարման, կամ աւելի ճիշդ է, աքսորման խզմիրլեան սրբազանի, խիզճ, օրէնք, արդարութիւն, կարգ, կանոն, իրաւունք և պարտուց ճանաչման ազնուութիւնը ծալված՝ մէկ կողմ դրած է, և կըննամք յանդիլ սա ճշմարտութեան՝ թէ մասնաւոր նպատակ մը կայ այս անբացատրելի գործողութեանց մէջ, որոց դէմ թէև ոչ թէ ազգը, ոչ թէ Եկեղեցին, ոչ թէ եկեղեցւոյ սրբութիւնները կը բողոքեն միայն, այլ ընդհանուր բարոյական մարդկութիւնը դատախազ կը կանգնի,—բայց չեմք կրնար հասկանալ Վահան Տէր-Մինասեանի պէս դաւաճանի մը ընծայուած այդ պատիւին նշանակութիւնը... Ա՛հ, ինչպէս հաւատալ ժողովուրդի մը բարոյական կեանքը այդպիսի լպիրշ հրէշի մը ձեռքը և ինչպէս կը զիջանի այս կերպ անգութ անօրէնութիւն մը ընելու Օրմանեան պատրիարքը...

Ալ կարծենք թէ հարկ չի մնար միւս կանդիդատ վարդապետներու վրայ խօսիլ, որոնք իրարմէ առաւել կամ նուազ անարժանութեամբ ծանօթ են ազգին և որոց մէջէն քիչեր կրնամք ցոյց տալ իբրև արժանաւոր հովիւներ իրենց յանձնուած հօտին:

Կրնայ առարկուիլ մեզ թէ «Գիրքին երկու երեսն ալ կարդալու է». ինչ կարող էր ընել պատրիարք մը, երբ դտնուած եկեղեցականները այդպիսիներն են, թողուր որ անովին մնայ ինչ դեղեցիկ դաս մը պիտի տար անոր. վարդապետն զգաց ու գիշերանց կծիկը դրաւ: Այվազեան այն վարդապետն է՝ որ Աչըզեանի օրով՝ վանայ տեղապահ անուանուելով՝ իր պաշտօնատեղին երթալու համար հարիւր օսմանեան ոսկի (մօտ 1000 բուբլի) ստացաւ պատրիարքարանէ. վան հասնելով, ժողովրդեան ալ մէկ քանի հարիւր լիրաներն առաւ: Վանայ պօղոսեան և Ապօղոսեան կուսակցութիւններն իրարու դէմ զինուած էին. վարդապետն սկսաւ իր մաքիավէլական էնթրիկները գործածել և տեսնելով որ ժողովուրդն հետզհետէ իրեն դէմ կ'ելնէ, Արճէշ թեմական այցելութիւն մ'ընելու պատրուակաւ՝ այն կողմերէն ալ բաւականաչափ դուսմար չորթեց և առանց վան դառնալու՝ չունչը Տիգրանակերտ առաւ, անկից ալ Պոլիս փախաւ: Այվազեան այն վարդապետն է, որ յետոյ ողբացեալ Եղիշէ վարդապետի՝ Տրապիզոնի կոտորածէն քիչ վերջը, մինչ տեղւոյն ժողովուրդը ահաբեկ, լքուած ու կողոպտուած՝ իր ուսելու հացն անգամ չ'ունէր՝ Խզմիրլեան կոչում ըրաւ անոր ազգասիրութեանն և յորդորեց որ Տրապիզոն երթայ և անհովիւ թշուառ ժողովուրդը մխիթարէ, բայց վարդապետը մինչև որ վաթսուն ոսկի չառաւ՝ տեղէն չը շարժեցաւ: Տրապիզոն երթալով՝ տեսաւ որ իր քսակը պարարտացնելու համար դրամը կը պակսի և առաջնորդական հասոյթները նուազած են. Խզմիրլեան սրբազանի հրաժարելու լուրը առնելուն պէս՝ տեղւոյն թշուառ ժողովուրդը երեսի վրայ թողուց և մայրաքաղաքս եկաւ: Բարեբոդիմէոս դպրն ալ Վահան վարդապետ Տէր Մինասեան Պարտիզակցին, ոստիկանութեան նախորդ նախարար Նազիմի սրտակից մտերիմը... Կրնամք հակընայ՝ թէ պատրիարք կամ վարչութիւն, յետ հրաժարման, կամ աւելի ճիշդ է, աքսորման խզմիրլեան սրբազանի, խիզճ, օրէնք, արդարութիւն, կարգ, կանոն, իրաւունք և պարտուց ճանաչման ազնուութիւնը ծալված՝ մէկ կողմ դրած է, և կըննամք յանդիլ սա ճշմարտութեան՝ թէ մասնաւոր նպատակ մը կայ այս անբացատրելի գործողութեանց մէջ, որոց դէմ թէև ոչ թէ ազգը, ոչ թէ Եկեղեցին, ոչ թէ եկեղեցւոյ սրբութիւնները կը բողոքեն միայն, այլ ընդհանուր բարոյական մարդկութիւնը դատախազ կը կանգնի,—բայց չեմք կրնար հասկանալ Վահան Տէր-Մինասեանի պէս դաւաճանի մը ընծայուած այդ պատիւին նշանակութիւնը... Ա՛հ, ինչպէս հաւատալ ժողովուրդի մը բարոյական կեանքը այդպիսի լպիրշ հրէշի մը ձեռքը և ինչպէս կը զիջանի այս կերպ անգութ անօրէնութիւն մը ընելու Օրմանեան պատրիարքը...

Ալ կարծենք թէ հարկ չի մնար միւս կանդիդատ վարդապետներու վրայ խօսիլ, որոնք իրարմէ առաւել կամ նուազ անարժանութեամբ ծանօթ են ազգին և որոց մէջէն քիչեր կրնամք ցոյց տալ իբրև արժանաւոր հովիւներ իրենց յանձնուած հօտին:

Կրնայ առարկուիլ մեզ թէ «Գիրքին երկու երեսն ալ կարդալու է». ինչ կարող էր ընել պատրիարք մը, երբ դտնուած եկեղեցականները այդպիսիներն են, թողուր որ անովին մնայ ինչ դեղեցիկ դաս մը պիտի տար անոր. վարդապետն զգաց ու գիշերանց կծիկը դրաւ: Այվազեան այն վարդապետն է՝ որ Աչըզեանի օրով՝ վանայ տեղապահ անուանուելով՝ իր պաշտօնատեղին երթալու համար հարիւր օսմանեան ոսկի (մօտ 1000 բուբլի) ստացաւ պատրիարքարանէ. վան հասնելով, ժողովրդեան ալ մէկ քանի հարիւր լիրաներն առաւ: Վանայ պօղոսեան և Ապօղոսեան կուսակցութիւններն իրարու դէմ զինուած էին. վարդապետն սկսաւ իր մաքիավէլական էնթրիկները գործածել և տեսնելով որ ժողովուրդն հետզհետէ իրեն դէմ կ'ելնէ, Արճէշ թեմական այցելութիւն մ'ընելու պատրուակաւ՝ այն կողմերէն ալ բաւականաչափ դուսմար չորթեց և առանց վան դառնալու՝ չունչը Տիգրանակերտ առաւ, անկից ալ Պոլիս փախաւ: Այվազեան այն վարդապետն է, որ յետոյ ողբացեալ Եղիշէ վարդապետի՝ Տրապիզոնի կոտորածէն քիչ վերջը, մինչ տեղւոյն ժողովուրդը ահաբեկ, լքուած ու կողոպտուած՝ իր ուսելու հացն անգամ չ'ունէր՝ Խզմիրլեան կոչում ըրաւ անոր ազգասիրութեանն և յորդորեց որ Տրապիզոն երթայ և անհովիւ թշուառ ժողովուրդը մխիթարէ, բայց վարդապետը մինչև որ վաթսուն ոսկի չառաւ՝ տեղէն չը շարժեցաւ: Տրապիզոն երթալով՝ տեսաւ որ իր քսակը պարարտացնելու համար դրամը կը պակսի և առաջնորդական հասոյթները նուազած են. Խզմիրլեան սրբազանի հրաժարելու լուրը առնելուն պէս՝ տեղւոյն թշուառ ժողովուրդը երեսի վրայ թողուց և մայրաքաղաքս եկաւ: Բարեբոդիմէոս դպրն ալ

սուլթանընտիր վարչութեան անդամ կարգեց, իսկ պատրիարքը՝ Կրօնական ժողովոյ: Ահա այս այն Այվազեան վարդապետն է, որ այժմ կարին պիտի զրկուի՝ իբրև անգնահատելի բարեմասնութեանց տէր մի անձնաւորութիւն, զոր Օրմանեան այնքան խնամքով կը պահէ իր ձեռքին տակ՝ ըստ իւր յայտարարութեան «կարևորագոյն վիճակի մը համար»:

Կարևոր վիճակներէն մին է նաև Տրապիզոն՝ որու համար տեղապահ որոշուած է Ճերմակեան Մեսրոպ վարդապետը, նոյնպէս պապականութենէ դարձած: Այս վարդապետին ինչպիսի մէկը լինելը նախ պատրիարքարանի քիմին տակ՝ Սկիտարի ժողովուրդէն հարցնելու՝ և յետոյ Բագուի և Ատրպատականի հոգևոր կառավարութիւններէն անոր վարքին, բարքին ու տուած քարոզներուն վրայօք ընդարձակ տեղեկութիւններ ստանալու է, այն ատեն միայն կրնայ հասկցուիլ թէ ինչ աղտոտ և անպէտ մարդ մ'է Ճերմակեանը և թէ ինչպէս իր վարած ամեն պաշտօնի վրա միշտ սև քօղեր ձգեր ու հեռացեր է, փորը մնալով եպիսկոպոս լինելու բուռն փափագը:

Շեռակն ըսելով՝ Օրմանեան լաւ կրցաւ գործերը կարգադրել. իրեն ճակատագրին հետևորդ այս երկու չնորհնակ խոստովանողները՝ Սև ծովու ափերէն սկսած մինչև Էրզրում, ուղղութեան մէկ գծի վրա գեղեցիկ կերպով մը շարեց:

Օրմանեանի վարժ ու վարպետ գրիչէն ըղխած ծանօթ տեղեկագրին մէջ չողչողունս կը փայլի

ոտանալու պատճառով, քաղաքի մէջ խառնակութիւններ են տեղի ունենում: Գիշերները փողոց դուրս գալը բոլորովին վտանգաւոր է: Անցեալներում հայոց թաղում մի հայի ուզեցել են կողոպտել, բայց նա մի կերպով ազատվել է: Մարտի 4/16-ին հայոց թաղում սէյիդները մի պարսկի, հարբած լինելու պատճառով, մինչև մահամերձ լինելը ծեծեցին: Վրա հասան և ոստիկանները, որոնք արբեցողին դնելով մի բեռնակրի շալակը, բանտը տարին՝ մի քանի դան կորզելու համար: Ծեծվողի հագուստները բոլորովին հանել էին. վերցրել էին նոյնպէս նրա ժամացոյցը և վրան ունեցած բոլոր իրեղէնները:

Ատրպատականի Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը, հետեւելով Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական ընկերութեանը, ընդհանուր ժողովի է հրաւիրել իր անդամուհիներին և Թաւրիզի բոլոր տիկիններին ու օրիորդներին:

Ա. Ն.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ցունաց թագուհին ստացել է Պետերբուրգից մի նամակ 50,000 բուբլի գումարով յօգուտ կրետացի փախստականների:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԳՐՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

Ըէֆորմները սկսվում են. երկինք, երկիր վըկայ՝ սկսվում են: Ճշմարիտ է, չեն սկսվում Հայաստանից և տարաբաղդ քրիստոնեաներից, այլ Պարիզից և դեսպան Միւնիր-բէյից. բայց մի և նոյն է, գլխաւորն այն է, որ սկսվում են. ինչ նշանակութիւն ունի տեղը և ազգը...

Որպէս զի թերահաւատ ընթերցողը հանաք չը կարծի իմ խօսքերը՝ աւելի լաւ է որ ես առաջ բերեմ ըէֆորմների առաջին փաստը ամբողջապէս, ինչպէս հաղորդում են Պարիզի բուլվարական լրագիրները.

«Խօսակցութեան նիւթը այժմ Պարիզի թիւրքաց դեսպանն է, որը հանրապետութեան նախագահի վերջին բային՝ եկել էր առանց ազգային ֆէսի, որից ոչ մի թիւրք երբէք չէ բաժանվում, մանաւանդ հանդիսաւոր տեղերում: Միւնիր-բէյ ման էր գալիս պարահանդէսի դահլիճներում բաց գլխով՝ կռան տակ ունենալով բոլորովին նոր չապօ-կլակ: Այս դէպքը մեծ իրարանցում է առաջ բերել: Ինչով բացատրել մի այդպիսի մեծ փոփոխութիւն: Գուցէ սուլթանի դեսպանը դրանով ուզեց ցոյց տալ, որ իր Մեծը մտադիր է ոտք դնել ըէֆորմների շաւղի վրա...»:

Երեմ մի այդպիսի բան կայ, որովհետեւ, ինչպէս հաղորդում են նոյն լրագիրները՝ բոլոր դեսպանները չատացին անմիջապէս հեռագրով այդ մասին տեղեկացնել ըստ պատկանելոյն, որ ցոյց է տալիս, թէ խնդիրը այդտեղ սովորական ֆէսի խնդիր չէ, այլ քաղաքական ֆէսի, և հետևաբար նոր ըէֆորմները այնքան տարբեր պէտք է լինեն statu-quo-ից, որքան

մնայ որ դեղեցիկ դաս մը պիտի տար անոր. վարդապետն զգաց ու գիշերանց կծիկը դրաւ: Այվազեան այն վարդապետն է՝ որ Աչըզեանի օրով՝ վանայ տեղապահ անուանուելով՝ իր պաշտօնատեղին երթալու համար հարիւր օսմանեան ոսկի (մօտ 1000 բուբլի) ստացաւ պատրիարքարանէ. վան հասնելով, ժողովրդեան ալ մէկ քանի հարիւր լիրաներն առաւ: Վանայ պօղոսեան և Ապօղոսեան կուսակցութիւններն իրարու դէմ զինուած էին. վարդապետն սկսաւ իր մաքիավէլական էնթրիկները գործածել և տեսնելով որ ժողովուրդն հետզհետէ իրեն դէմ կ'ելնէ, Արճէշ թեմական այցելութիւն մ'ընելու պատրուակաւ՝ այն կողմերէն ալ բաւականաչափ դուսմար չորթեց և առանց վան դառնալու՝ չունչը Տիգրանակերտ առաւ, անկից ալ Պոլիս փախաւ: Այվազեան այն վարդապետն է, որ յետոյ ողբացեալ Եղիշէ վարդապետի՝ Տրապիզոնի կոտորածէն քիչ վերջը, մինչ տեղւոյն ժողովուրդը ահաբեկ, լքուած ու կողոպտուած՝ իր ուսելու հացն անգամ չ'ունէր՝ Խզմիրլեան կոչում ըրաւ անոր ազգասիրութեանն և յորդորեց որ Տրապիզոն երթայ և անհովիւ թշուառ ժողովուրդը մխիթարէ, բայց վարդապետը մինչև որ վաթսուն ոսկի չառաւ՝ տեղէն չը շարժեցաւ: Տրապիզոն երթալով՝ տեսաւ որ իր քսակը պարարտացնելու համար դրամը կը պակսի և առաջնորդական հասոյթները նուազած են. Խզմիրլեան սրբազանի հրաժարելու լուրը առնելուն պէս՝ տեղւոյն թշուառ ժողովուրդը երեսի վրայ թողուց և մայրաքաղաքս եկաւ: Բարեբոդիմէոս դպրն ալ

ինչ այդ վիճակներն:—Արդէն այս կէտն ակնարկած էր Օրմանեան իր տեղեկագրի մէջ. նա ըսած է թէ՝ «առանց ծանրանալու ընտրելոց ինչպէս և արդէն ընտրելոց ըստ ամենայն պարագայից յարմարութեանց և արժանաւորութեանց վրա, արդի եկեղեցական դասուն մէջէն ընտրած է» այդ առաջնորդցու և տեղապահցու եկեղեցականները:—Օրմանեան չատ իրաւունք ունի. նա լաւ համոզված է թէ՝ եթէ ինքը չը լինէր՝ արդի եկեղեցական դասուն միջէն Պոլսոյ հայոց պատրիարք ալ չը պիտի գտնուէր: Օրմանեան դայս ըսելով՝ երկու թռչուն մէկտեղ կը զարնէ և այնու՝ իր վրա ծանրացող ապագայ պատասխանատուութենէ մը փախուստ տալու համար՝ դուրս ելլելու դուռ մը կը պատրաստէ. բայց այլ է պաշտօնի համար մարդ գտնել, այլ է մարդու համար պաշտօն փնտռել: Ուստի վերոյիշեալ առարկութիւնը կրնար մասամբ արդարանալ՝ եթէ նկատած չը լինէինք, որ Օրմանեան առաւել աշխատած է իր սիրած մարդոց պաշտօն գտնելու, քան թէ պաշտօնի համար մարդ:—Լաւագոյն էր, եթէ արժանաւորները չը կային, պարապ թողուլ այդ թեմերը, քան թէ Վահան Տէր-Մինասեանի, Այվազեանի և Ճերմակեանի պէս մարդիկներու ձեռք յանձնել բազմաթիւ ժողովրդոց սիրան ու հոգին: Սուրբ է պաշտօնը, սուրբ պէտք է լինի և պաշտօնեայն. այս է մեր վերջին խօսքը:

Գիրուկ

կարմիր գէսը չալո-կլակից։ Այժմ, սիրելի ընթերցող, ես գտնէ հաւատում եմ բէֆորմների իրականացման. երբ թիւրքն ընդունակ է դառնում իր գլուխը փոխելու (թիւրքի գլուխ առանց գէսի,—դա մեծ փոփոխութիւն է), կը նշանակի հասել է ժամը, «զի լցցի բանն Աստուծոյ...»։

—

Ներեցէք, ընթերցող, որ այդ կարեւոր, բէֆորմական-ֆէսական հարցի մասին ես չատ էլ չեմ տար-ած-վում, այլ ստիպված եմ յդ-վել իմ պաչոտնակից Աւետիք Արասխանեանցի կարևորագոյն յօդուածի վրա, որ լոյս պիտի տեսնի «Մուրճի» փետրվարմարտ համարում։ Այդ յօդուածով «ժամանակակից ծաղրի» հեղինակը, ունենալով ամենաուտնատակ, պէտք է բառերով ապացուցանի, որ «Մուրճից» առաջ երբէք դէպք չէ եղել, որ մի թիւրք դեսպան ֆէսի տեղ չալո-կլակ կրի, և որ այդ մեծ բէֆորմով ամբողջ թիւրքաց հայերը պարտական են միմիայն «Մուրճին» և նրա խմբագրին։

Ափսոս միայն, որ այդ կարևորագոյն համարը մի փոքր ուշ պիտի լոյս տեսնի, որովհետև ամբողջ փետրվար և մարտ ամիսները պ. Արասխանեանց, իրանից անկախ պատճառներով, զբաղված լինելով ընտրական ագիտացիաներով, անկարող եղաւ «Մուրճի» փետրվարի տետրը մինչև այսօր էլ հրատարակել։ Թարսի նման, Բարեգործական և Հրատարակչական ընկերութիւնների ժողովներն էլ միմեանց ետից ընկան, այնպէս որ խլեցին «Մուրճի» ամբողջ կուսակցութեան (որ թարգմանի՝ Արասխանեան) քունը։ Հեշտ է հեռուից նայել և սառնասիրտ մնալ.—բայց մտէք պ. Արասխանեանցի սրտի, կամ, ինչպէս «Մուրճի» ստեղծած բառատեղծը կասէր, «հոգու խոր-խոր չերտերի մէջ», և կը տեսնէք, թէ այնտեղ ինչ հրդեհ կայ, մեծամտութեան հրդեհ... Կուսակցական ցուցակ է կազմված «Մուրճի» խմբագրատանը և պէտք է ոչ մի միջոց չը խնայել այդ ցուցակը անցկացնել։ Դա պատուի խնդիր է։ Լսեցի, որ այդ ցուցակով Արասխանեանց կոչված է իր չլինելի վրա կրելու ընդհանուր ժողովի նախագահի լուծը։ Տիգրան Նազարեանց՝ վարչութեան նախագահ. Աբգար Յովհաննիսեան կամ Սպանդարեան՝ գանձապահ. վիպասաններ Շիրվանզադէ և Մուրացան՝ խմբագրական մասնաժողովի անդամներ, առաջինը իբրև հմուտ թարգմանիչ, երկրորդը՝ իբրև երևելի լեզուագէտ։ Միւս անդամների համար ի նկատի ունեն բառատեղծներ՝ Սրինգ, Յ. Թումանեան, դարձեալ Յ. Թումանեան, դարձեալ Ա. Թումանեան (թող ներեն առաջին Թումանեանները, որ ես վերջին անունը իրանց կողքին եմ դնում) և... և... անիծեալ գրիչը չէ գրում։ Քարտուղարի պաշտօնի համար խօսք կայ պատմագիր Երիցեանի մասին, այն մտքով որ նա վարժ է մանրամասնութեամբ ամեն ինչ գրել, և ուրեմն չատ յարմար է այդ երևելի գործիչների բերանից դուրս թռած իւրաքանչիւր բառ անմահացնելու... Ներկայ եղողներից մի քանիսը ըղձեցին մի քանի արդէն չափից դուրս արատաւորված անունների դէմ, բայց դա մնաց անհետևանք։ Մեծամտութիւնը խլացրեց այդ ըղձքը...

Այդ նոր կուսակցութեան հեռաւոր նպատակների և կազմի մասին պ. Աւետիք Արասխանեանց, խորհրդակցական ժողովի մէջ, մի ահագին ճառ ասաց. ճառը սկսվեց երեկոյեան ժամը 8-ին և տևեց մինչև կէս գիշերվայ 12 ժամը։ Ուզիղ 12 ժամին, երբ նա, ուտարտելով իր ճառը, բարձր ձայնով գոչեց.—«ահա, պարոններ, լսվում են և համակրական ձայներ», ներկայ եղողները, որոնցից չատերը արդէն երազներ էին տեսնում, արթնացան, և յիրաւի լսեցին համակրական ձայներ — աքաղաղները կանչում էին...

—Ձայներ, ձայներ. մենք կը շարունակենք լսել, վրա բերեց «Մուրճի» խմբագիրը, մատը թափ տալով...

ԳՐՈՂ.

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԿՐԵՏԷ

ԼՕՆԴՕՆ, 20 մարտի։ Հաղորդում են թէ պատուիրակներից իւրաքանչիւրը կուղարկի Կրետէ մի մի բատալիոն, բաղկացած 600 անձից։

ԼՕՆԴՕՆ, 20 մարտի։ «Times»-ին հեռագրում են Աթէնքից. «Կրետէի կենդրոնական մասնաժողովը ուղարկեց առաջ Կայսրին, անգլիական թագուհուն, աւստրիական և գերմանական կայսրներին և նախագահ Ֆորին մի նամակ, որի մէջ յայտնում է իր զարմանքը այն բանի համար, որ «կրետացիներին ամբակոծում են նոյն նաւերը, որոնց նպատակ պարտական են իրանց ազատութիւնը», և խնդրում է յետ վերցնել «այդ խիստ որոշումը, որ կարող է կրետացիներին ենթարկել սովի նոր տանջանքների»։

ԿԱՆԷԱ, 20 մարտի։ Ռմբակոծութիւնը վերանորոգվեց։ Ցունական այն վայրը, որ բռնել է Կալամի բլոկհաուզը, որ իշխումէ Իպեդդինի վրա, թնդանոթներ արձակեց։ Սուդայի նաւահանգստում կանգնած նաւերն էլ թնդանոթներ արձակեցին։

ԼՕՆԴՕՆ, 19 մարտի։ «Standard» լրագրին հեռագրում են Կանէայից, մարտի 18-ից. «Կոիւը Սպինալունգայի մօտ տևեց 48 ժամ։ Թիւրքերը ծանր վնասներ կրեցին և նահանջեցին դէպի կղզու մէջ գտնվող ամրացրած դիրքը։ Ֆրանսիական ծովապետը գնում է Սպինալունգա, երևի, թիւրքերին ազատելու համար»։

ԿԱՆԷԱ, 19 մարտի։ Ժամի 4-ին, կէսօրից յետոյ, ապստամբները յարձակվեցին Իպեդդին մարտկոցի վրա, որ տիրապետող դիրք ունի Սուդայի ծովածոցի վրա։ Պետութիւնների նաւերը սկսեցին կրակ անել կրետացիների դէմ, որպէս զի օգնութիւն հասցնեն մարտկոցին, որ գրաւել են թիւրքերը և որը զինված է 12 թնդանօթներով և մի միտրալիոզով։

ՊԱՐԻԶ, 20 մարտի։ Կիսապաչտօնական օրգանները եռանդով դատապարտում են յոյների յարձակողական գործերը Կրետէում և յայտնում են, որ որպէս զի կարելի լինի վերջ դնել այն դրութեան, որ չափազանց երկար է տևում, պէտք է աւելացնել պետութիւնների զօրքերի քանակութիւնը և այդպիսով տալ ծովապետներին գործելու համար բաւարար ոյժեր։—Կիսապաչտօնական օրգանները առաջարկում են պետութիւններին ջանքեր գործ դնել, որ Թիւրքիան յետ կանչէ Կրետէից իր զօրքերը։

ՊԱՐԻԶ, 20 մարտի։ Կրետէում նորերս տեղի ունեցած միջադէպերը առիթ տուին պետութիւններին հաղորդագրութիւններ փոխանակել միմեանց հետ, որոնց հետանքն այն կը լինի, որ Յունաստանի ծովափի մանաւոր պաշարումը, որը սկզբունքով արդէն վճռված էր, ի կատար ածվի կարճ միջոցում։

—

ԲԱԹՈՒՄ, 19 մարտի։ Այստեղ հասաւ հակաժանտախտային յանձնաժողովի լիազոր Վիսմանդ՝ պրոֆէսոր Կովալսկու, ուսադ բժիշկ Բրիսնելի, Պետերբուրգի դատաստանական պրոկուրորի օգնականի և օֆիցէրների հետ։

ԿՈՊԻՆՀԱԳԷՆ, 19 մարտի։ Այստեղ ժամանեց մայիսի 18-ին Թագուհի Մարիա Ֆեոդորովնան։ Գնեցեր կայարանից Նորին Մեծութեանը ուղեկցում էին Թագաժառանգ իշխան Վոլդեմար, իշխանուհիներ Ինգեբորգ և Տիրա և նոյնպէս ռուսաց միսիայի անդամները։ Վոկզալում Թագուհուն հանդիպեցին Թագաւորը, Ուէլսի իշխանուհին, իշխան Կարլ իր ամուսնու հետ և իշխանուհի Մարիա։

ՀՌՕՄ, 20 մարտի։ Իտալական կառավարութիւնը կրետէ կուղարկի, երևի, ալպեան հրացանաձիգ զօրքերի մի բատալիոն։

ՅՆՏԻՆԻՆ, 19 մարտի։ Սկուտարիում բաղարը և բոլոր խանութները փակված են։ Վալին զօրքեր կանչեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 մարտի։ Թագաւոր Կայսրը, Մեծ իշխանուհիները և Մեծ իշխանները մարտի 19-ին ներկայ էին Մարիինեան թատրոնում ինվալիդների օգտին տրված ներկայացման։

Կ. ՊՕԼԻՍ, 21 մարտի։ Սամսոնի ուռուց հիւպատոս Ցիմմէրման ուղարկվեց Թոքատ, անկարգութիւնների գործի քննութեան ներկայ լինելու։ Անգլիան նոյնպէս ուղարկում է այնտեղ ներկայացուցիչ։

Սիվասի անգլիական հիւպատոսը հաստատում է, որ Թոքատում սպանված են 89 և վիրաւորված են 36 հայեր. շրջակայքում խալանված են երեք գիւղեր։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՒՄԱՅԻ

ԳԱԲՐՕԻ ԸՆՏԱՆԻՔԸ

վեպը անմիջապէս ստանալու համար՝ պէտք է դիմել Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցը, այսպէս՝ Тифлисъ, Центральная книжная торговля. 10—10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, վօրօնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և ներքին հիւանդութիւնների։

Դ. Գ. ԶԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ԲՈՒԴԵՆԿՈ—10—11 ժ. կանանց և երեխայոց հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. կանանց հ. չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ, իսկ 1½—2 ժ. երկուշաբթի, երեքշաբթի և հինգշաբթի։

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի և ուրբաթ։

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7½ ժ.

Հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հեռադիտութիւններ են անում մդի, խիպ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկ. գեր. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ԿՐՈՒԺՕԿՈՒՄ

Կիրակի, մարտի 23-ին, տեղի կունենայ Վ. Վ. ԼՈՒՆԿԵՎԻՉԻ առաջին դասախօսութիւնը երեխաների և աշակերտների համար՝

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Դասախօսութիւնը կը լինի մոգական պատկերներով։

Սկիզբը 12 ժամին ցերեկվայ։ Տոմակներ, 50 կոպէկից մինչև 20 կոպէկ, կարելի է ստանալ Մեասնիկեանի խանութում, Դվորցովայա, Խիդեկելի խանութում, Գօլովինսկիյ։ Իսկ դասախօսութեան օրը Կրուժոկի մէջ։

1—1

Ի ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ

Ը. շանակեալ է ամուրդ ի 26 այսր մարտի առանց կրկնամուրդի վասն տալոյ ի վարձու զկալուածս Ս. Էջմիածնի՝ որ ի Տըփխիս, 1, տուն, որ ի փոան թաղի (5-րդ քաղաքամաս), 2, երեք կրպակք հանդերձ նկուղիւ մերձ կաթուղիկէ եկեղեցւոյ, և 3, մի երկյարկանի տուն, որ ի Սիմէոնեան փողոցի։ Ամուրդն սկսանի յ12-րդ ժամու աւուր, ուստի ցանկացողք կարեն ներկայ դտանիլ ի նշանակեալ պահուն հանդերձ գրաւականաւք։

Անդամ կնսիսատորիայի՝
Համազասպ վարդապետ

(№ 32) 3—3

Անցեալ դարուն Յակոբ Պալաքեան ազգանուն մի 16 տարեկան պատանի, նախկին պատրիարք Իզմիրլեանի յանձնարարութեամբ Պոլսից գալով Էջմիածին, ընդունվում է ճեմարանը. բայց հազիւ մնում է այդտեղ երկու ամիս, զանազան հանգամանքներ հարկադրում են պատանուն թողնել ճեմարանը և վերադառնալ Կ. Պոլիս իր ծնողների մօտ։ Այդ նպատակով Կաթողիկոսից ստանում է ճանապարհածախս և հեռանում է Էջմիածնից։ Այդ օրվանից անցնում է 9 ամիս, զեռ նա իր ծնողների մօտ չէ գտնվում, և ծնողները չը գիտեն թէ որտեղ է գտնվում իրանց որդին։ Ուստի խնդրվում է նրան որ և է տեղ տեսնողները յայտնեն հեռագրով հասցէով՝ ԹԻՖԼԻՍ, Ներսիսեան դպրոց, Տիգրան Պալաքեան կամ HAMBURG «Absender» neumarkt 31 Poste restante, Grigor Balakian.

(№ 30) 2—2

1892-ի ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ խումբը, որ վաճառվում էր մեծ տեսակը 3 բուբլով, միջակը 1—50 կ., այսուհետև կը ծախվի մեծը 2 բուբլով, միջակը 1 բուբլով, առանց կարգօնի։ Ճանապարհածախսը մեզ վրա. ժամանակաւոր հասցէս. Верхніе Акулисы (Эрив. губ.)

Լուսանկար ՍՄԲԱՏԵԱՆՑ
(№ 32) 2—3

ՄԱՍՍԱԺ

Բժիշկների ղեկավարութեան տակ, պարապում եմ զանազան հիւանդութիւնների բժշկելով, ՄԱՍԱԺՈՎ, և առողջական ԳԻՄՆԱՍՏԻԿԱՑՈՎ։ Հիւանդների ընդունելութիւնը՝ 5½—6½ ժամը երեկոյեան։ Ա. Չալեան փողոց, № 19։

24—148 ԳԷՈՐԳ ԽՈՍՐՈՎԵԱՆՑ

ԲԺՇԿԱԿԱՆ - ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

ԲԺՇԿԱՊԵՏ ՓՐԱՆՑԻՈՒՍԻ

Վէլիամինովսկայա փող. տուն № 4, Դումայի հանդէպ։ Բաց է 2—3 ժամ։

ՄԱՍՍԱԺԻ ԴԱՍԵՐ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ

(№ 10) 9—10

Կ. ՊՕԼՍԵՅԻ

ԱՆԱԳԱՌԻԹ (կլէկլի) և ՊԱՆՁԱԳԱՌԻԹ յայտարարում են, որ ընդունում են պատուէրներ էժան գնով, երաշխաւոր են շինածի ամրութեան և աւուղական լինելու համար։ Դիմել 5-րդ քաղաքամաս, Ցիցիանովի փողոց, տուն Խոջայանցի, № 4։

3—3

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

վարչութիւնը յայտնում է, որ ընկերութեան կանոնադրութեան § 31 համաձայն, մարտի 22-ին, շաբաթ, երեկոյեան 7½-ին, Թիֆլիսի քաղաքային դումայի գահլիճում նշանակված է

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

որի պարապմունքի առարկաներն են. 1) 1896 թ-ի տեղեկագրի, հաշուի և 1897 թ-ի նախահաշուի ընթերցումը և հաստատումը. 2) հեղինակների վարձատրութեան և դրական մրցանակաբաշխութեան մասին զեկուցում. 3) պաշտօնատար անձերի ընտրութիւնը՝ վարչութեան նախագահի, փոխնախագահի, մի անդամի և գրագրի և խմբագրական մասնաժողովի երեք անդամի։ Վարչութիւնը հարկ է համարում յայտարարել, որ վարչութեան վերջին նիստը նշանակված է մարտի 22-ին, շաբաթ օր, ցերեկվայ ժամը 2-ին և մինչև այդ նիստը կը լինի այն նոր անդամների ընդունելութիւնը, որոնք կը ցանկանան մասնակցել ընդհանուր ժողովին։ Ընկերութեան 1896 թ-ի տեղեկագիրը ստանալ ցանկացողները թող բարեհաճեն դիմել ընկերութեան գրասենեակը սկսած ամսիս 19-ից։ 3—3

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէյ, մանելով Տրապիզօն, Սամսօն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, ապրիլ ամսի 2/14-ին ԱՐՄԷՆԻ շոգենաւը, նաւապետ ԲՈՒԼ, և այդպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ։ Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից

Պակաս գներով։ Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբերէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիոնի փող. նախկին Արծրունու քարվանսարա։ ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլդարեանին, Կոլիբեանկինսկայա հրապարակ։ ՆՈՎՈՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիոր Հերչինրոդերին։ (№ 16) 19—20

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ

մեծադիր և չատ աջող պատկերը ՃԵՆԱՊԱԿՈՒ ՎՐԱ. (на фарфорѣ) պատրաստված Լօնդոնում («Ազբիւր-Տարազի» հրատարակութիւն) բացառապէս վաճառվում է Յովհաննէս Տէր-Սարգսեանի թղթավաճառանոցում։

Պատկերն ունի յենարան և պէտք չունի շրջանակի, չատ չքեղ զարդ է ամեն հայի տան համար։

ԳԻՆԸ 3 ՐՈՒԲԼԻ. «Մշակի» կովկասեան բաժանորդները ճանապարհածախս չեն վճարում։

Հասցէն՝ ТИФЛИСЪ, И. С. Теръ-Саркисьянъ, магазинъ, Дворцовая улица. (№ 31) 3—10

Дозволено цензурою, Тифлисъ, 21 Марта 1897 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. №8.